

**«Հայաստանի ազգային ագրարային համալսարան»
հիմնադրամ**

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No` ՀԱԱՀ-ԱՄԳ-ԼԱԲ-24/2

**ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՌՈԲՈՏՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**

**Ծրագիր՝ Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ
ֆինանսավորում**

Վարկ No. 9389-AM

**Գնորդ՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան»
հիմնադրամ**

Մատակարար՝ «ԲՄՍ տեխնո» ՍՊԸ

Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն

Երևան, 2025թ.



Պայմանագիր No. ՀԱԱՀ-ԱՄԳ-ԼԱԲ-24/2

ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ կնքվել է՝

15 մայիս, 2025թ

ՄԻՋԵՎ

- (1) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Հ. Զաքոյանի, ով գործում է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ում հիմնական գործունեության վայրն է ք. Երևան, Տերյան փ. 74 (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և
- (2) «ԲՄՍ տեխնո» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ս. Շեվչենկոյի, ով գործում է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ում հիմնական գործունեության վայրն է Խարկովյան փող.175, 02121, Կիև (այսուհետ՝ «Մատակարար»), մյուս կողմից

ԱՌ ԱՅՆ, որ Գնորդը հայտերի ներկայացման հրավեր է ներկայացրել որոշակի Ապրանքների և հարակից ծառայությունների համար, մասնավորապես «**Լաբորատոր սարքավորումների և ուսումնական ռորտների մատակարարում**» և ընդունել է Մատակարարի կողմից ներկայացված Հայտը **12,004,590.00 (տասներկու միլիոն չորս հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀդրամ** (չափաբաժին 8) գումարով՝ նշված Ապրանքների և Ծառայությունների մատակարարման համար,

Գնորդը և Մատակարարը համաձայնվում են հետևյալի մասին՝

1. Սույն Պայմանագրի բառերն ու արտահայտությունները պետք է ունենան այն նույն իմաստը, ինչ ունեն Պայմանագրի փաստաթղթերում,
2. Հետևյալ փաստաթղթերը պետք է կազմվեն, ընթերցվեն և մեկնաբանվեն որպես սույն Պայմանագրի անբաժանելի մաս: Սույն Պայմանագիրը գերակայություն ունի պայմանագրի մնացած փաստաթղթերի նկատմամբ:
 - (ա) Ընդունման նամակը
 - (բ) Հայտի նամակը
 - (գ) Պայմանագրի հատուկ պայմաններ
 - (դ) Պայմանագրի ընդհանուր պայմաններ
 - (ե) Հատկորոշիչը (ներառյալ Պահանջների ցանկը և Տեխնիկական հատկորոշիչները)
 - (զ) Լրացված ցուցակները (ներառյալ Գնացուցակները)
3. Սույն Պայմանագրով սահմանված ձևով Գնորդի կողմից Մատակարարին կատարվելիք վճարումների դիմաց Մատակարարը պարտավորվում է Գնորդին մատակարարել Ապրանքներ և մատուցել Ծառայություններ, ինչպես նաև վերացնել դրանց թերությունները՝ Պայմանագրի բոլոր դրույթների համաձայն:

4. Սույնով Գնորդը պարտավորվում է՝ Ապրանքների և ծառայությունների ապահովման, ինչպես նաև դրանց թերությունների վերացման դիմաց վճարել Մատակարարին Պայմանագրի գինը կամ որևէ այլ գումար, որը ենթակա կլինի վճարման Պայմանագրի դրույթների համաձայն՝ Պայմանագրով սահմանված ժամկետներում և ձևով:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ վերոգրյալի, կողմերը վերը նշված օրը, ամսին և տարում կնքում են սույն Պայմանագիրը՝ *Գնորդի Երկրի* օրենսդրության համաձայն:

ՄԱՏԱԿԱՐԱՐ՝
«ԲՄՍ Տեխնո» ՍՊԸ

ԳՆՈՐԴ՝
«Հայաստանի ազգային ագրարային
համալսարան» հիմնադրամ

Ուկրաինա, ք.Կիև, Խարկովյան փող.175, 02121

ՀՀ, ք. Երևան, Տերյան փ. 74

Բանկ՝ «ԱլտԲանկ» Բաժնետիրական
Ընկերություն

Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ UA253209400000026000116362001

ՆՄՀ միջոցների հ/հ 2470065028240070

ՀՎՀՀ: 22945907

SWIFT CODE: AVTOUA22XXX

Intermediary Bank: The Bank of
New York Mellon, NEW YORK, USA

SWIFT: IRVTUS3N

Correspondernt Bank: JSC THE STATE
EXPORT-IMPORT BANK OF UKRAINE


ՆՄՀ համաֆինանսավորման միջոցների հ/հ
2470065028240080

ՀՎՀՀ՝ 01507028

SWIFT: EXBSUAUXXXX

Ռեկտոր՝ Հ. Զաքոյան

Տնօրեն՝ Տ.Շևչենկո


(ստորագրություն)

Կ.Տ.



Ընդունման նամակ



LIMITED LIABILITY COMPANY «BMS TECHNO»

Kharkivske Shose St., 175, office 17, Kyiv, Ukraine,
02121

<https://www.bmstechno.ua/> office@bmstechno.com.ua

UA863052990000026000016205416

+38 (044) 585 59 75 ID: 22945907

Հայտի նամակ

Ամսաթիվ՝ 22.11.2024

ԱՄԳ No.: ՀԱՄՀ-ԱՄԳ-ԼԱԲ-24/2

Հայտի ներկայացման հրավերի No.: ՀԱՄՀ-ԱՄԳ-ԼԱԲ-24/2

Ում «Հայաստանի ազգային ազդարարյին համալսարան» *հիմնադրամ, ծրագրի ղեկավար՝
Կարոն Արա Ամիրյանին*

- (ա) Մենք ուսումնասիրեցինք Մրցութային փաստաթղթերը, այդ թվում «Հրահանգներ մրցույթի մասնակիցներին» (ՀՄՄ) Բաժնի 8-րդ կետի համաձայն թողարկված հավելվածները և չունենք որևէ վերապահում դրանց նկատմամբ:
- (բ) Մենք համապատասխանում ենք մասնակցության իրավունքի պահանջներին և չունենք շահերի բախում ՀՄՄ 4.6 ենթակետի համաձայն:
- (գ) Համաձայն ՀՄՄ 4.6 ենթակետի՝ Գնորդի երկրում Հայտի սպասիվման հայտարարագրի կիրարկման պատճառով մենք Գնորդի կողմից չենք կասեցվել կամ հայտարարվել ոչ իրավասու:
- (դ) Մրցութային փաստաթղթերի համաձայն և Պահանջների ցանկում սահմանված Մատակարարման ժամանակացույցերին համապատասխան՝ Մենք առաջարկում ենք մատակարարել հետևյալ Ապրանքները.

Չափաբաժին 1. Ուսումնական ռոբոտներ 1

Չափաբաժին 2. Ուսումնական ռոբոտներ 2

Չափաբաժին 3. Ուսումնական ռոբոտներ 3

Չափաբաժին 4. Լաբորատոր սարքավորումներ 1

Չափաբաժին 5. Լաբորատոր սարքավորումներ 2

Չափաբաժին 6. Լաբորատոր սարքավորումներ 3

Չափաբաժին 7. Լաբորատոր սարքավորումներ 4

Չափաբաժին 8. Լաբորատոր սարքավորումներ 5

Չափաբաժին 9. Լաբորատոր սարքավորումներ 6

- (ե) Մեր Հայտի ընդհանուր գինը՝ առանց հաշվի առնելու (գ) կետով ստորև առաջարկված բոլոր գեղչերը, հետևյալն է.

Յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր գինը մի քանի չափաբաժինների դեպքում՝ **Չափաբաժին 1. Ուսումնական ռոբոտներ 1՝ 11,152,440 /տասնմեկ միլիոն մեկ հարյուր հիսուներկու հազար չորս հարյուր քառասուն/ ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:**

Չափաբաժին 2. Ուսումնական ռոբոտներ 2՝ 6,920,160 /վեց միլիոն ինը հարյուր քսան հազար հարյուր վաթսու/ ՀՀ դրամ՝առանց ԱԱՀ:



LIMITED LIABILITY COMPANY «BMS TECHNO»

Kharkivske Shose St., 175, office 17, Kyiv, Ukraine,
02121

<https://www.bmstechno.ua/> office@bmstechno.com.ua

UA863052990000026000016205416

+38 (044) 585 59 75 ID: 22945907

Չափաբաժին 3. Ուսումնական ծորածներ 3՝ 16,975,920 /տասնվեց միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր քսան/ ՀՀ դրամառանց ԱՄՀ:

Չափաբաժին 4. Լաբորատոր սարքավորումներ 1՝ 4,356,300 /չորս միլիոն երեք հարյուր հիսունվեց հազար երեք հարյուր/ ՀՀ դրամառանց ԱՄՀ:

Չափաբաժին 5. Լաբորատոր սարքավորումներ 2՝ 20,369,310 /քսան միլիոն երեք հարյուր վաթսուհինը հազար երեք հարյուր տաս/ ՀՀ դրամառանց ԱՄՀ:

Չափաբաժին 6. Լաբորատոր սարքավորումներ 3՝ 5,545,020 /հինգ միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար քսան/ ՀՀ դրամառանց ԱՄՀ:

Չափաբաժին 7. Լաբորատոր սարքավորումներ 4՝ 4,896,450 /չորս միլիոն ութ հարյուր իննսունվեց հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամառանց ԱՄՀ:

Չափաբաժին 8. Լաբորատոր սարքավորումներ 5՝ 12,004,590 /տասներկու միլիոն չորս հազար հինգ հարյուր իննսուն/ ՀՀ դրամառանց ԱՄՀ:

Չափաբաժին 9. Լաբորատոր սարքավորումներ 6՝ 11,538,150 /տասնմեկ միլիոն հինգ հարյուր երեսունույթ հազար հարյուր հիսուն/ ՀՀ դրամառանց ԱՄՀ:

Բոլոր չափաբաժինների ընդհանուր գինը (բոլոր չափաբաժինների գների գումարը)՝ 93,758,340 /իննսուներեք միլիոն յոթ հարյուր հիսունույթ հազար երեք հարյուր քառասուն/ ՀՀ դրամառանց ԱՄՀ (ԱՄՀ-ն կիրառելի չէ, քանի որ մասնակիցը ՀՀ ռեզիդենտ չէ):

(գ) Առաջարկվող գեղչերը և դրանց կիրառման մեթոդաբանությունը հետևյալն է.

(i) Առաջարկվող գեղչերն են՝ Կ/Չ:

(ii) Ձեռքերի կիրառումից հետո ստացված գուտ գնի ճշգրիտ հաշվարկների մեթոդաբանությունը ներկայացվում է ստորև՝ Կ/Չ:

(ե) Մեր հայտը վավեր է **90 օրացույցային օր՝** սկսած Մրցույթային փաստաթղթերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետից, և այն մեզ համար կմնա պարտադիր և կարող է ընդունվել ցանկացած պահի՝ մինչև այդ ժամկետի ավարտը:

(ը) Մեր հայտն ընդունվելու դեպքում պարտավորվում ենք ներկայացնել կատարման երաշխիք Մրցույթային փաստաթղթերի համաձայն:

(թ) ՀՄՄ 4.2(ե) ենթակետի համաձայն՝ սույն մրցույթային գործընթացում որպես Մրցույթի մասնակից կամ ենթակապալառու մենք չենք մասնակցում մեկից ավելի հայտում:

(ժ) Մենք՝ այդ թվում պայմանագրի որևէ մասի համար պատասխանատու մեր ենթակապալառուները և մատակարարները, չենք հայտարարվել ոչ իրավասու Բանկի կողմից, Գնորդի երկրի օրենքներով կամ պաշտոնական կանոնակարգերով, կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշման համապատասխանության սկսում:

(ի) Մենք պետական կազմակերպություն չենք :

(լ) Մեր կողմից վճարվել կամ ենթակա են վճարման հետևյալ միջնորդավճարները, պարգևավճարները կամ վարձավճարները՝ կապված մրցույթային գործընթացի կամ պայմանագրի կատարման հետ: **Կ/Չ**

Ստացողի անունը	Հասցեն	Պատճառը	Գումարը
----------------	--------	---------	---------



LIMITED LIABILITY COMPANY «BMS TECHNO»

Kharkivske Shose St., 175, office 17, Kyiv, Ukraine,
02121

<https://www.bmstechno.ua/> office@bmstechno.com.ua

UA863052990000026000016205416

+38 (044) 585 59 75 ID: 22945907

№/з	№/з	№/з	№/з
(1а)	Մենք գիտակցում ենք, որ սույն հայտը՝ Ձեր կողմից շնորհման ծանուցման մեջ ներառված գրավոր համաձայնության հետ միասին, իրավական ուժ ունեցող պայմանագրի կհանդիսանան մեր միջև՝ մինչև պաշտոնական պայմանագրի կազմումը և ուժի մեջ մտնումը, և՝		
(ծ)	Մենք գիտակցում ենք, որ Դուք պարտավոր չեք ընդունել ամենացածր գնահատված առաջարկը կամ Ձեր կողմից ստացված որևէ այլ առաջարկ:		
(կ)	Սույնով հավաստում ենք, որ մեր կողմից ձեռնարկվել են բոլոր քայլերը՝ ապահովելու, որ մեզ համար կամ մեր առանձին գործող որևէ անձ չներգրավվի որևէ տեսակի խարդախության կամ կաշահակերության մեջ:		

Մրցույթի մասնակցի անվանումը՝ **«ԲՄՍ տեխնո» ՍՊԸ**

Մրցույթի մասնակցի անունից Հայտը ստորագրելու համար պատշաճ կերպով լիազորված անձի անունը՝ **Տարսու Շեխինկո**

Հայտը ստորագրող անձի պաշտոնը՝ **«ԲՄՍ տեխնո» ՍՊԸ-ի տնօրեն**

Վերադարձվող անձի ստորագրությունը

Ստորագրման ամսաթիվը **22.11.2024**



Պայմանագրի հատուկ պայմաններ

Պայմանագրի հատուկ պայմանները (ՊՀՊ) պետք է հավելեն և/կամ լրամշակեն Պայմանագրի ընդհանուր պայմանները (ՊԸՊ): Հակասությունների դեպքում այս դրույթները կգերակայեն ՊԸՊ-ի նկատմամբ:

Ա. Ընդհանուր	
ՊԸՊ 1.1 (թ)	Գնորդի երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն
ՊԸՊ 1.1 (ժ)	Գնորդը՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՊԸՊ 1.1 (կ)	Վերջնական նշանավայր(եր)ը՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ՝ ք. Երևան, Տերյան 74
ՊԸՊ 4.2	Incoterms-ի հրատարակության տարբերակը՝ Incoterms 2020
ՊԸՊ 5.1	Լեզուն՝ Հայերեն
ՊԸՊ 8.1	Ծանուցումների համար Գնորդի հասցեն է՝ Ում՝ պրն. Արա Ամիրյան, ծրագրի ղեկավար Փողոցը՝ Տերյան 74 Հարկի/սենյակի համարը՝ 2-րդ հարկ, 1Ա404 Քաղաքը՝ ք. Երևան Փոստային ինդեքսը՝ 0009 Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն Հեռախոս՝ +374 77 080829 Էլ. հասցե՝ ara.k.amiryan@gmail.com
ՊԸՊ 9.1	Կարգավորող օրենքը պետք է լինի Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:
ՊԸՊ 10.2	Արբիտրաժային վարույթի ընթացակարգի կանոնները, համաձայն ՊԸՊ 10.2 կետի, պետք է լինեն հետևյալ ձևով. Գնորդի և Մատակարարի միջև վեճի ծագման դեպքում այն պետք է կարգավորվի միջնորդ կամ արբիտրաժային դատարանի միջոցով՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
ՊԸՊ 13.1	Մատակարարի կողմից ներկայացվելիք առաքման և այլ փաստաթղթերի մանրամասները հետևյալն են. 1. Մատակարարի հաշիվ-ապրանքագիր/հաշիվ ապրանքագրեր , որում/որոնցում հստակ նշված է ապրանքների նկարագրությունը, քանակը, միավորի գինը, ընդհանուր արժեքը, Գնորդի հետ վերջնական նշանավայրում ապրանքների հանձնման-ընդունման ակտ(եր) և այլն: 2. Արտադրողի կամ մատակարարի երաշխիքի վկայական 3. Արտադրողի լիազորագիր պահանջվող ապրանքների համար
ՊԸՊ 15.1	Մատակարարվող ապրանքների և Հարակից ծառայությունների գները ենթակա չեն ճշգրտման:

ՊԸՊ 16.1	ՊԸՊ 16.1 - Սույն Պայմանագրի շրջանակներում Մատակարարին կատարվող վճարումների մեթոդը և պայմանները հետևյալն են. Գնորդի երկրում Ապրանքների և Ծառայությունների համար կատարվող վճարումները պետք է կատարվեն ՀՀ դրամով, հետևյալ կերպ. (i) Կանխավճար՝ Պայմանագրային գնի տաս (10) տոկոսը պետք է վճարվի Պայմանագրի կնքումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում համապատասխան վճարման պահանջագրի և համարժեք գումարի չափով բանկային երաշխիքի դիմաց՝ մրցութային փաստաթղթերում տրված ձևաթղթով կամ Գնորդի համար ընդունելի այլ ձևաթղթով: (ii) Մատակարարումից, տեղադրումից և հարակից ծառայությունների մատուցումից հետո՝ Մատակարարված ապրանքների մասով Պայմանագրային գնի իննսուն (90) տոկոսը պետք է Մատակարարին վճարել երեսուն (30) օրվա ընթացքում՝ ապրանքները մատակարարելուց, վերջնական նշանավայրեր հանձնելուց, Պայմանագրով սահմանված ծառայությունները մատուցելուց, ՊԸՊ 13.1 կետում նշված փաստաթղթերի ներկայացումից և Գնորդի կողմից համապատասխան ամփոփ հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:
ՊԸՊ 16.5 (իգ)	Վճարման ուշացման ժամկետը, որից հետո Գնորդը պետք է տոկոս վճարի Մատակարարին 60 օր է: Կիրառվող տոկոսադրույքը՝ շաբաթական 0,1 % է:
ՊԸՊ 18.1	Կատարման երաշխիք՝ Պահանջվում է: Կատարման երաշխիքի գումարը՝ պայմանագրի գնի 10 տոկոսը: ՊԸՊ 28.3 դրույթին համապատասխան, Մատակարարի կողմից երաշխիքային պարտավորությունները ծածկելու համար՝ Ապրանքների մատակարարումից և ընդունումից հետո Կատարման երաշխիքը պետք է իջեցվի մինչև Պայմանագրի գնի 2%-ը:
ՊԸՊ 18.3	Կատարման երաշխիքը պետք է ներկայացվի Բանկային երաշխիքի ձևով: Կատարման երաշխիքը պետք է ներկայացվի Պայմանագրի Գնի արժույթով:
ՊԸՊ 18.4	Կատարման երաշխիքի մարումը պետք է տեղի ունենա՝ ՊԸՊ 28.3 դրույթին համապատասխան, Մատակարարի կողմից երաշխիքային պարտավորությունները ծածկելու համար՝ Ապրանքների մատակարարումից և ընդունումից հետո Կատարման երաշխիքը պետք է իջեցվի մինչև Պայմանագրի գնի 2%-ը:
ՊԸՊ 23.2	Փաթեթների ներքին և արտաքին փաթեթավորումը, նշումը և փաստաթղթավորումը պետք է լինի՝ Չկան լրացուցիչ պահանջներ:
ՊԸՊ 25.2	Մատուցվող հարակից ծառայություններն են. կիրառելի են:

ՊԸՊ 26.1	Պետք է իրականացվեն հետևյալ ստուգումները՝ Վերջնական նշանավայրում ապրանքի ֆիզիկական վիճակի, պահանջվող տեխնիկական հատկորոշիչների և տվյալ ապրանքին առնչվող հարակից ծառայությունների համապատասխանության ստուգում Գնորդի կողմից: Վերջնական նշանավայրի հասցեն է ՀՀ, ք. Երևան Տերյան 74:
ՊԸՊ 26.2	ՊԸՊ 26.1 նշված ստուգումները պետք է իրականացվեն վերջնական նշանավայրում, ինչպես նշված է Պահանջների ցանկի (Բաժին VII) Ապրանքների ցանկ և մատակարարման ժամանակացույցում:
ՊԸՊ 27.1	Վնասի փոխհատուցումը կազմում է՝ շաբաթական 0.5% ուշացված ապրանքների կամ չկատարած հարակից ծառայությունների համար:
ՊԸՊ 27.1	Վնասի փոխհատուցման առավելագույն գումարը՝ չպետք է գերազանցի Պայմանագրի գնի 10%-ը:
ՊԸՊ 28.3	Երաշխիքի վավերականության ժամկետը՝ 12 ամիս: Երաշխիքի նպատակով սահմանված վերջնական նշանավայրերն են՝ Ծրագրի Վերջնական իրականացման վայրը՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ՝ ք. Երևան, Տերյան 74
ՊԸՊ 28.5	Ապրանքների վերանորոգման կամ փոխարինման ժամկետն է՝ 15 օր:

Պայմանագրի ընդհանուր պայմաններ

1. Սահմանումներ

1.1 Սույնով սահմանվում են հետևյալ բառերի ու արտահայտությունների իմաստները.

- (ա) «Բանկ» նշանակում է Համաշխարհային Բանկ և վերաբերում է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկին (ՎԶՄԲ) կամ Միջազգային Զարգացման Ընկերակցությանը (ՄԶԸ):
- (բ) «Պայմանագիր» նշանակում է Գնորդի և Մատակարարի միջև կնքված Պայմանագիր՝ կցվող Պայմանագրային փաստաթղթերի հետ միասին, ներառյալ բոլոր հավելվածները, լրացումները, ինչպես նաև այնտեղ ներառված բոլոր փաստաթղթերը:
- (գ) «Պայմանագրային փաստաթղթեր» նշանակում է Պայմանագրում նշված բոլոր փաստաթղթերը՝ ներառյալ դրանում կատարված ցանկացած փոփոխություն:
- (դ) «Պայմանագրի գին» նշանակում է Մատակարարին վճարվող գումար՝ ինչպես սահմանված է Պայմանագրում, որը կարող է ենթակա լինել ավելացման, ճշգրտման կամ նվազեցման՝ Պայմանագրի համաձայն:
- (ե) «Օր» նշանակում է օրացուցային օր:
- (զ) «Ավարտ» նշանակում է Մատակարարի կողմից Պայմանագրով սահմանված պայմաններով և ժամկետներում Հարակից ծառայությունների իրականացումը:
- (է) «ՊԸՊ» նշանակում է Պայմանագրի ընդհանուր պայմաններ:
- (ը) «Ապրանքներ» նշանակում է բոլոր տեսակի ապրանքները, հումքը, սարքերն ու սարքավորումները և/կամ այլ նյութերը, որոնք սույն Պայմանագրի շրջանակներում Մատակարարը պետք է առաքի Գնորդին:
- (թ) «Գնորդի երկիր»-ը այն երկիրն է, որը սահմանված է Պայմանագրի հատուկ պայմաններում (ՊՀՊ):
- (ժ) «Գնորդ» նշանակում է Ապրանքներ և Հարակից ծառայություններ ձեռք բերող կազմակերպություն,

ինչպես սահմանված է ՊՀ-ում:

- (հ) «Հարակից Ծառայություններ» նշանակում է ապրանքների մատակարարման հետ կապված այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ ապահովագրությունը, տեղադրումը, ուսուցումը և սկզբնական սպասարկումը, ինչպես նաև Պայմանագրով սահմանված Մատակարարի նմանօրինակ այլ պարտավորություններ:
- (ը) «ՊՀ» նշանակում է Պայմանագրի հատուկ պայմաններ:
- (խ) «Ենթակապալառու» նշանակում է ցանկացած անձ, մասնավոր կամ պետական կառույց, կամ դրանց համակցություն, ում հետ Մատակարարը ունի ենթակապալի պայմանագիր՝ մատակարարվող Ապրանքների կամ Հարակից ծառայությունների մատուցման մի մասի իրականացման համար:
- (ծ) «Մատակարար» նշանակում է ցանկացած անձ, մասնավոր կամ պետական կառույց, կամ դրանց համակցություն, ում հայտը ընդունվել է Գնորդի կողմից և ում անունը նշված է Պայմանագրում որպես այդպիսին:
- (կ) «Վերջնական նշանավայր», որտեղ կիրառելի է, նշանակում է ՊՀ-ում սահմանված վայրը:

2. Պայմանագրային փաստաթղթեր

2.1 Պայմանագրով սահմանված առաջնայնության հերթականությամբ բոլոր փաստաթղթերը, որոնք կազմում են Պայմանագիրը (և դրանց բոլոր մասերը) պետք է լինեն փոխկապակցված, փոխլրացնող և փոխադարձ բացատրելի: Պայմանագիրը պետք է դիտարկվի որպես մեկ ամբողջական փաստաթուղթ:

3. Խարդախություն և կոռուպցիա

- 3.1 Բանկը պահանջում է համապատասխանություն իր քաղաքականությանը՝ կապված կոռուպցիոն և խարդախության գործելակերպի հետ, ինչպես սահմանված է ՊԸՊ հավելվածում:
- 3.2 Գնորդը պահանջում է մատակարարից բացահայտել ցանկացած միջնորդավճար կամ վարձավճար, որը կարող է վճարված լինել կամ ենթակա է վճարման որևէ գործակալի կամ մեկ այլ կողմի՝ կապված մրցութային գործընթացի կամ Պայմանագրի կատարման հետ: Բացահայտված տեղեկատվությունը առնվազն պետք է ներառի գործակալի կամ մեկ այլ կողմի անվանումը և հասցեն, գումարը և արժույթը, ինչպես նաև միջնորդավճարի, պարգևավճարի

կամ վարձավճարի պատճառը:

4. Մեկնաբանություն

4.2 Ելնելով համատեքստից՝ եզակի թիվը կարող է նշանակել հոգնակի և հակառակը:

4.3 Incoterms/Ինկոթերմս

EXW եզրույթը կարգավորվում է Incoterms-ի ընթացիկ հրատարակության մեջ սահմանված կանոններով, որը սահմանված է ՊՀ-ով և հրապարակված է Փարիզի Միջազգային առևտրի պալատի կողմից:

4.4 Ամբողջ պայմանագիրը

Պայմանագիրը Գնորդի և Մատակարարի միջև կնքված ամբողջական համաձայնագիր է և փոխարինում է կողմերի միջև մինչև Պայմանագրի ստորագրումն առկա բոլոր հաղորդակցություններին, բանակցություններին և համաձայնագրերին (գրավոր կամ բանավոր):

4.5 Փոփոխություն

Պայմանագրում կատարված ցանկացած փոփոխություն համարվում է վավեր, եթե այն ներկայացված է գրավոր, թվագրված է ամսաթվով, հստակորեն վերաբերում է Պայմանագրին և ստորագրված է յուրաքանչյուր կողմի լիազոր ներկայացուցչի կողմից:

4.6 Հրաժարման իրավունքի բացակայություն

(ա) Պայմանավորված ստորև ՊԸՊ 4.5 (բ) դրույթով՝ ցանկացած կողմի՝ Պայմանագրի պայմանների և դրույթների կատարման հետաձգումը, կատարումից հրաժարումը կամ կատարման հետ կապված արտոնությունները կամ կողմերից մեկի կողմից մյուսին տրված ժամանակը չպետք է վնասի, ներգործի կամ սահմանափակի Պայմանագրի հետ կապված այդ կողմի իրավունքները, ինչպես նաև կողմերից որևէ մեկի հրաժարումը Պայմանագրի ցանկացած խախտումից չի հանդիսանա հրաժարում Պայմանագրի հաջորդող կամ շարունակական խախտումներից:

(բ) Պայմանագրի շրջանակներում որևէ կողմի՝ իրավունքներից, լիազորություններից կամ միջոցներից հրաժարվելը պետք է լինի գրավոր, թվագրված ամսաթվով և ստորագրված տվյալ կողմի լիազորված անձի կողմից, ինչպես նաև այն պետք է սահմանի հրաժարման իրավունքը և ծավալները:

4.7 Ամբաժանելիություն

Եթե Պայմանագրի որևէ դրույթ կամ պայման արգելվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում, ապա այդ արգելքը, անվավերությունը կամ ուժը կորցրած ճանաչումը չպետք է ազդեն Պայմանագրի որևէ այլ դրույթների և պայմանների վավերականության կամ կիրառելիության վրա:

5. Լեզուն

5.1 Պայմանագիրը, ինչպես նաև Պայմանագրի շրջանակներում Մատակարարի և Գնորդի միջև կատարվող ողջ նամակագրությունն ու փաստաթղթերը պետք է գրված լինեն **ՊՀՊ-ում** սահմանված լեզվով: Պայմանագրի մաս կազմող լրացուցիչ փաստաթղթերը և տպագրված գրականությունը կարող են ներկայացվել մեկ այլ լեզվով, եթե ապահովվում է համապատասխան պարբերությունների ճշգրիտ թարգմանությունը սահմանված լեզվով, որի դեպքում, Պայմանագիրը մեկնաբանելիս, առաջնայնությունը տրվում է այդ թարգմանությանը:

Մատակարարը պետք է իր վրա վերցնի գերակա լեզվով թարգմանության բոլոր ծախսերը, ինչպես նաև կրի այդպիսի թարգմանության ճշգրտության բոլոր ռիսկերը՝ իր կողմից ներկայացվող փաստաթղթերի համար:

6. Համատեղ ձեռնարկում, կոնսորցիում կամ ընկերակցություն

6.1 Եթե Մատակարարը համատեղ ձեռնարկում է, կոնսորցիում կամ ընկերակցություն, ապա բոլոր կողմերը համատեղ և առանձին պատասխանատվություն են կրում Գնորդի առջև՝ Պայմանագրի դրույթների կատարման համար, ինչպես նաև իրենց կողմերից մեկին պետք է նշանակեն, որպես առաջնորդ կողմ՝ լիազորելով նրան հանդես գալու համատեղ ձեռնարկման, կոնսորցիումի կամ ընկերակցության անունից: Համատեղ ձեռնարկման, կոնսորցիումի կամ ընկերակցության կառուցվածքը չպետք է փոփոխվի՝ առանց Գնորդի նախնական համաձայնության:

7. Իրավասություն

7.1 Մատակարարը և նրա ենթակապալառուները պետք է ունենան իրավասու երկրի քաղաքացիություն: Համարվում է, որ Մատակարարը կամ նրա ենթակապալառուն ունեն այն երկրի քաղաքացիություն, որտեղ նրանք քաղաքացի են, կամ ստեղծվել, կազմավորվել կամ գրանցվել և գործում են այդ երկրի օրենքների դրույթներին համապատասխան:

7.2 Սույն Պայմանագրի շրջանակներում և Բանկի կողմից ֆինանսավորվող մատակարարման ենթակա բոլոր Ապրանքներն ու Հարակից ծառայությունները պետք է լինեն Իրավասու եկրների ծագմամբ: Սույն կետի իմաստով «ծագում» նշանակում է այն երկիրը, որտեղ ապրանքները աճեցվել, արդյունահանվել, մշակվել, ստեղծվել, արտադրվել կամ վերամշակվել են, կամ արտադրության, վերամշակման կամ հավաքման միջոցով ստեղծվում է նոր առևտրային ճանաչում ստացած ապրանք, որն իր հիմնական

ընթացիկներով էապես տարբերվում է իր բաղադրիչ մասերից:

8. Ծանուցումներ

8.1 Պայմանագրի համաձայն՝ կողմերի միջև փոխանակվող ցանկացած ծանուցում պետք է կատարվի գրավոր՝ **ՀՊՊ**-ում նշված հասցեով: «Գրավոր» տերմինը նշանակում է հաղորդակցում գրավոր եղանակով՝ ստացողի կողմից ունենալով համապատասխան ապացույց ծանուցման ստացման վերաբերյալ:

8.2 Ծանուցումն ուժի մեջ մտած է համարվում ստացման պահից կամ դրա ուժի մեջ մտնելու ամսաթվից՝ կախված նրանից, թե որ ամսաթիվն է ավելի ուշ:

9. Կարգավորող օրենսդրություն

9.1 Սույն պայմանագիրը պետք է կարգավորվի և մեկնաբանվի համաձայն Գնորդի երկրում գործող օրենքների:

10. Վեճերի կարգավորում

10.1 Գնորդը և Մատակարարը պետք է ամեն ջանք գործադրեն, որպեսզի անմիջական՝ ոչ ֆորմալ բանակցությունների միջոցով բարեկամաբար լուծեն սույն Պայմանագրով կամ դրա առնչությամբ ծագած ցանկացած տարաձայնություն կամ վեճ:

10.2 Եթե քսանութ (28) օրվա ընթացքում, կողմերը չեն կարողանում լուծել վեճը կամ տարաձայնությունը փոխադարձ բանակցությունների միջոցով, ապա Գնորդը կամ Մատակարարը ծանուցում է ուղարկում մյուս կողմին՝ վեճը դատական կարգով լուծելու իր մտադրության մասին և, ինչպես նշված է ստորև, խնդրո առարկայի շուրջ ոչ մի դատական գործընթաց չի կարող սկսվել, մինչև այդպիսի ծանուցում չտրվի: Ցանկացած վեճ կամ տարաձայնություն, որի համար՝ սույն կետի համաձայն տրվել է դատական գործընթաց սկսելու մտադրության մասին ծանուցում, պետք է վերջնականապես կարգավորվի դատական կարգով: Դատավարությունը կարող է սկսվել Պայմանագրով սահմանված Ապրանքները առաքելուց առաջ կամ հետո: Դատական գործընթացները պետք է իրականացվեն համաձայն **ՊՀՊ-ում սահմանված** ընթացակարգերի:

10.3 Անկախ արբիտրաժային դատարանին դիմելուց

ա) կողմերը շարունակում են կատարել Պայմանագրում սահմանված իրենց պարտավորությունները, եթե այլ համաձայնություն չունեն, և

բ) Գնորդը Մատակարարին է վճարում վերջինիս

հասանելիք գումարները:

11. Ստուգումներ և աուդիտ Բանկի կողմից

11.1 Ապրանքների հետ կապված՝ Մատակարարը պետք է վարի, ինչպես նաև բոլոր ջանքերը գործադրի իր ենթակապալառուներին պահանջելու վարել՝ ճշգրիտ և համակարգված հաշիվներ ու գրանցումներ՝ այնպիսի ձևով ու մանրամասներով, որոնք հստակորեն ցույց կտան համապատասխան ժամանակային փոփոխություններն ու ծախսերը:

11.2 Մատակարարը պետք է թույլատրի, ինչպես նաև իր ենթակապալառուներից պահանջի թույլատրել Բանկին և/կամ Բանկի կողմից նշանակված անձանց՝ ստուգելու Մատակարարի գրասենյակները և այն բոլոր հաշիվներն ու գրանցումները, որոնք վերաբերում են Պայմանագրի կատարմանը և հայտի ներկայացմանը, ինչպես նաև, Բանկի պահանջով, պետք է թույլատրի Բանկի կողմից նշանակված աուդիտորներին իրականացնելու նշված փաստաթղթերի ստուգումը: Մատակարարը, ինչպես նաև իր ենթակապալառուներն ու խորհրդատուները պետք է ուշադրություն դարձնեն 3-րդ կետին (Կոռուպցիա և խարդախություն), որը, մասնավորապես, նախատեսում է, որ այն գործողությունները, որոնք նպատակաուղղված կլինեն խոչընդոտելու Բանկի կողմից կատարվող ստուգումներին և աուդիտի իրականացման իրավունքին, որոնք նախատեսված են սույն 11.1 ենթակետով, հանդիսանում են արգելված գործունեություն, որը կհանգեցնի Պայմանագրի դադարեցմանը (ինչպես նաև ոչ իրավասության հայտարարվելու որոշմանը՝ համաձայն Բանկի պատժամիջոցների մասին ընթացակարգերի):

12. Մատակարարման շրջանակները

12.1 Մատակարարվելիք Ապրանքները և Հարակից ծառայությունները պետք է լինեն այնպես, ինչպես սահմանված են Պահանջների ցանկում:

13. Առաքում և փաստաթղթեր

13.1 Համաձայն ՊԸՊ 33.1 ենթակետի՝ Ապրանքների առաքումը և Հարակից ծառայությունների ավարտը պետք է իրականացվի համաձայն Պահանջների ցանկում նշված Առաքման և ավարտման ժամանակացույցի: Փոխադրման մանրամասները և Մատակարարի կողմից ներկայացվելիք այլ փաստաթղթերը սահմանվում են ՊՀԴ-ում:

14. Մատակարարի պարտականություն

14.1 Մատակարարը պետք է առաքի Մատակարարման շրջանակներում ներառված բոլոր Ապրանքներն ու Հարակից

ները	ծառայությունները համաձայն ՊԸՊ կետ 12-ի, և Առաքման և ավարտման ժամանակացույցի՝ ըստ ՊԸՊ կետ 13-ի:
15. Պայմանագրի գինը	15.1 Պայմանագրի շրջանակներում մատակարարված Ապրանքների և մատուցված Հարակից ծառայությունների դիմաց Մատակարարի կողմից սահմանված գները չպետք է տարբերվեն Մատակարարի հայտում նշված գներից:
16. Վճարման պայմաններ	16.1 Պայմանագրի գինը, ներառյալ կանխավճարները, եթե կիրառելի են, պետք է վճարվեն այնպես, ինչպես նշված է ՊՀՊ-ում: 16.2 Մատակարարը վճարման հայտը պետք է Գնորդին ներկայացնի գրավոր, կից ներկայացնելով՝ ապրանքագրեր, որոնք համապատասխանորեն պետք է նկարագրեն առաքված Ապրանքներն ու մատուցված Հարակից ծառայությունները, ՊԸՊ 13-րդ կետի համաձայն ներկայացված փաստաթղթեր, ինչպես նաև պայմանագրով նախատեսված այլ պարտավորությունների կատարման ժամանակ ներկայացված փաստաթղթեր: 16.3 Գնորդի կողմից վճարումները պետք է կատարվեն անհապաղ, սակայն Մատակարարի կողմից ապրանքագրի կամ վճարման պահանջի ներկայացման պահից ոչ ուշ, քան վաթսուն /60/ օրվա ընթացքում՝ Գնորդի ընդունումից հետո: 16.4 Վճարումները պետք է կատարվեն Գնորդի երկրի ազգային արժույթով: 16.5 Այն դեպքում, երբ Գնորդը չի վճարում Մատակարարին որևէ գումար սահմանված ժամկետում կամ ՊՀՊ-ում նշված ժամկետի շրջանակներում, Գնորդը Մատակարարին պարտավոր է վճարել այդ ուշացված վճարման գումարի տոկոսը՝ ՊՀՊ-ում սահմանված դրույքաչափով, ուշացված ժամանակահատվածի համար մինչև գումարի լրիվ վճարումը՝ լինի դա նախքան դատարանի կողմից որոշում կայացնելը, թե դրանից հետո:
17. Հարկեր և տուրքեր	17.1 Շրջանառության և մյուս հարկերը, տուրքերը և գանձումները, եթե այդպիսիք կան, ներառվում են Պայմանագրի գնի մեջ:
18. Կատարման երաշխիք	18.1 Պահանջի դեպքում, ինչպես սահմանված է ՊՀՊ-ով, Մատակարարը պայմանագրի շնորհման վերաբերյալ ծանուցումն ստանալուց հետո քսանութ (28) օրվա ընթացքում պետք է ներկայացնի Պայմանագրի կատարման երաշխիք՝ ՊՀՊ -ում նշված գումարի չափով:

18.2 Կատարման երաշխիքի գումարը Գնորդին վճարվում է որպես փոխհատուցում Պայմանագրի շրջանակներում Մատակարարի կողմից պարտականությունների չկատարման հետևանքով առաջացող որևէ վնասի դիմաց:

18.3 Ինչպես սահմանվում է ՊՀ-ով, Կատարման երաշխիքը, պահանջի դեպքում, պետք է նշված լինի Պայմանագրով սահմանված արժույթով և Գնորդի կողմից սահմանված ձևաչափով, կամ Գնորդի համար ընդունելի այլ ձևաչափով:

18.4 Գնորդի կողմից Կատարման երաշխիքը Մատակարարին է վերադարձվում սույն Պայմանագրի շրջանակներում մատակարարի պարտավորությունների՝ այդ թվում նաև ցանկացած երաշխիքային պարտավորությունների կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան քսանութ (20) օրվա ընթացքում, եթե ՊՀ-ով այլ բան սահմանված չէ:

19. Հեղինակային իրավունք

19.1 Տվյալներ և տեղեկատվություն պարունակող բոլոր գծագրերի, փաստաթղթերի և այլ նյութերի հեղինակային իրավունքը, որոնք Մատակարարը տրամադրում է Գնորդին՝ պատկանում է Մատակարարին, կամ, եթե դրանք Գնորդին են տրամադրվում անմիջականորեն կամ մատակարարի միջոցով՝ որևէ երրորդ անձի կողմից, ներառելով նյութերի մատակարարներին, ապա այդ նյութերի հեղինակային իրավունքը պետք է պատկանի այդ երրորդ կողմին:

20. Գաղտնի տեղեկատվություն

20.1 Գնորդն ու մատակարարը պետք է գաղտնի պահեն և առանց մյուս կողմի գրավոր համաձայնության չպետք է որևէ երրորդ կողմի բացահայտեն սույն Պայմանագրի հետ կապված որևէ փաստաթուղթ, տվյալ կամ այլ տեղեկատվություն, որոնք ուղղակի կամ անուղղակի ստացվել են մյուս կողմից՝ անկախ այն համգամանքից, թե այդ տեղեկատվությունը տրամադրվել է Պայմանագրի կատարումից կամ դադարեցումից առաջ, հետո, թե դրա ընթացքում: Անկախ վերոնշյալից, Մատակարարը կարող է իր ենթակապալառուին տրամադրել Գնորդից ստացված այդպիսի փաստաթուղթ, տվյալ կամ այլ տեղեկատվություն՝ այն չափով, որը նրան անհրաժեշտ կլինի սույն Պայմանագրով սահմանված իր աշխատանքը կատարելու համար, որի դեպքում Մատակարարը պետք է իր ենթակապալառուին ներկայացնի գաղտնի տեղեկատվությունը չբացահայտելու պահանջ՝ ինչպիսին պահանջվում է Մատակարարից, համաձայն ՊՀ կետ 20-ի:

20.2 Գնորդը Մատակարարի կողմից ստացված այդպիսի

փաստաթղթերը, տվյալներն ու այլ տեղեկատվությունը չպետք է օգտագործի Պայմանագրին չվերաբերող այլ նպատակներով: Նմանապես, Մատակարարը Գնորդի կողմից ստացված այդպիսի փաստաթղթերը, տվյալներն ու այլ տեղեկատվությունը չպետք է օգտագործի Պայմանագրի կատարմանը չվերաբերող այլ նպատակներով:

20.3 Այնուամենայնիվ, վերոնշյալ ՊԸՊ 20.1 և 20.2 ենթակետերով սահմանված կողմերի պարտավորությունները չեն վերաբերվում այն տեղեկատվությանը, որը՝

ա) Գնորդը կամ Մատակարարը պետք է փոխանակեն Բանկի կամ Պայմանագրի ֆինանսավորմանը մասնակցող այլ հաստատությունների հետ;

բ) տվյալ պահին կամ հետագայում հայտնի են դառնում հանրությանը՝ ոչ կողմերից որևէ մեկի մեղքով;

գ) կարող է ապացուցվել, որ տվյալ կողմը տեղեկատվությանը տիրապետել է դրա բացահայտման ժամանակ, որը նախկինում ուղղակի կամ անուղղակի չի ստացվել մյուս կողմի կողմից; կամ

դ) այլ օրինական աղբյուրից տվյալ կողմի համար տեղեկատվությունը դառնում է հասանելի երրորդ կողմից, ով գաղտնիության պարտավորություն չունի:

20.4 ՊԸՊ 20-րդ կետի վերոհիշյալ դրույթները որևէ կերպ չպետք է փոփոխեն Պայմանագրի ստորագրումից առաջ կողմերից որևէ մեկի կողմից տրված գաղտնիության որևէ պարտավորություն՝ կապված մատակարարման կամ դրա որևէ մասի հետ:

20.5 ՊԸՊ 20-րդ կետի դրույթները ուժի մեջ պետք է մնան Պայմանագրի կատարումից կամ որևէ պատճառով դադարեցումից հետո:

21. Ենթակապալառու

21.1 Մատակարարը պարտավոր է սույն Պայմանագրի շրջանակներում շնորհված բոլոր ենթակապալային պայմանագրերի մասին գրավոր ծանուցել Գնորդին, եթե դրանք նշված չեն եղել Հայտում: Այդպիսի ծանուցումը, սկզբնական հայտում կամ հետագայում, Մատակարարին չի ազատում Պայմանագրով նախատեսված իր պարտավորություններից, պարտականություններից կամ պատասխանատվությունից:

21.2 Ենթակապալի պայմանագրերը պետք է համապատասխանեն

ՊԸՊ 3-րդ և 7-րդ կետերով սահմանված դրույթներին:

**22. Տեխնիկական
հատկորոշիչներ և
չափանիշներ**

22.1 Տեխնիկական հատկորոշիչներ և գծագրեր

ա) Սույն Պայմանագրի շրջանակներում առաքվող Ապրանքներն ու մատուցվող Հարակից ծառայությունները պետք է համապատասխանեն Բաժին VII-ի Պահանջների ցանկում նշված տեխնիկական հատկորոշիչներին և չափանիշներին, իսկ այն դեպքում, երբ չի նշվում որևէ կիրառելի չափանիշ, ապա այն պետք է լինի համարժեք կամ գերազանցի պաշտոնական չափանիշներին, որոնց կիրառումը համապատասխան կլինի Ապրանքների ծագման երկրի չափանիշներին:

բ) Մատակարարը իրավունք ունի հրաժարվելու կրել որևէ պատասխանատվություն Գնորդի կամ նրա անունից հանդես եկողի կողմից տրամադրված կամ նախագծված ցանկացած նախագծի, տվյալների, գծագրերի, հատկորոշիչների և այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց որևէ փոփոխության համար՝ Գնորդին ծանուցելով այդպիսի հրաժարման մասին:

գ) Այն դեպքում, եթե Պայմանագրում հղում է կատարվում որոշակի կանոնների և չափանիշների՝ ըստ որոնց պետք է իրականացվի Պայմանագիրը, ապա այդպիսի կանոնների և չափանիշների խմբագրումը կամ փոփոխված տարբերակը պետք է լինի այն, ինչը սահմանված է Պահանջների ցանկում: Պայմանագրի իրականացման ընթացքում ցանկացած այդպիսի կանոնի կամ չափանիշի մեջ որևէ փոփոխություն կկիրառվի միայն Գնորդի կողմից հաստատումից հետո և կդիտարկվի ՊԸՊ 33-րդ կետի համաձայն:

**23. Փաթեթավորում և
փաստաթղթեր**

23.1 Մատակարարը պետք է ապահովի Ապրանքների այնպիսի փաթեթավորում, որը պահանջվում է կանխարգելելու դրանց վնասումը կամ փչացումը՝ Պայմանագրում նշված վերջնական նշանավայր տեղափոխելու ճանապարհին: Փաթեթավորումը պետք է բավարար լինի տեղափոխման ժամանակ առանց սահմանափակումների դիմակայելու կոպիտ վարվելաձևին, ինչպես նաև ծայրահեղ ջերմաստիճանների, աղերի կամ տեղումների կամ բացօդյա պահեստավորման ազդեցություններին: Անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնվեն փաթեթավորման չափսերն ու կշիռը, Ապրանքների առաքման վերջնական նշանավայրի հեռավորությունը, ծանր բեռնաթափման սարքավորումների բացակայությունը փոխադրման բոլոր կետերում:

24. Ապահովագրություն	24.1 Ապահովագրությունը մատակարարման վայրից (EXW) մինչև վերջնական նշանավայր ներառվում է պայմանագրի գնի մեջ:
25. Փոխադրումներ և հարակից ծառայություններ	25.1 Մատակարարը պատասխանատու է Ապրանքների փոխադրման համար մինչև վերջնական նշանավայր՝ նշված ՊԸՊ (ՊՀՊ) 1.1 (կ) ենթակետում: 25.2 Մատակարարից կարող է պահանջվել մատուցելու հետևյալ ծառայություններից որևէ մեկը կամ բոլորը, ներառյալ լրացուցիչ ծառայություններ, եթե դրանք սահմանված են ՊՀՊ-ում: ա) մատակարարված Ապրանքների տեղում հավաքման և/կամ մեկնարկային շահագործման իրագործումը կամ վերահսկումը; բ) մատակարարված Ապրանքների հավաքման և/կամ պահպանման համար անհրաժեշտ գործիքների տրամադրում; գ) մատակարարված Ապրանքների յուրաքանչյուր համապատասխան միավորի համար շահագործման և պահպանման մանրակրկիտ ձեռնարկի տրամադրում, դ) մատակարարված Ապրանքների գործարկում, վերահսկում, սպասարկում և/կամ վերանորոգում կողմերի միջև համաձայնեցված ժամանակահատվածի համար՝ պայմանով, որ այդ ծառայությունը չի ազատում Մատակարարին սույն Պայմանագրով սահմանված իր որևէ երաշխիքային պարտավորություններից, և ե) Մատակարարի գործարանում և/կամ տեղում Գնորդի աշխատակազմի վերապատրաստում մատակարարված Ապրանքների հավաքման, մեկնարկային շահագործման, գործարկման, պահպանման և/կամ վերանորոգման գծով: 25.3 Մատակարարի կողմից հավելյալ ծառայությունների համար գանձվող գները, եթե վերջիններս ներառված չեն Ապրանքների Պայմանագրի գնի մեջ, պետք է նախապես համաձայնեցվեն կողմերի միջև և չպետք է գերազանցեն Մատակարարի կողմից նմանատիպ ծառայությունների համար այլ կողմերից գանձվող տարածված դրույքաչափերը:
26. Ստուգումներ և փորձարկումներ	26.1 Մատակարարը պետք է իր հաշվին և առանց Գնորդի համար լրացուցիչ ծախսերի իրականացնի Ապրանքների և Հարակից ծառայությունների փորձարկումներ և/կամ ստուգումներ՝ ինչպես նշված է ՊՀՊ-ում :

26.2 Ստուգումները և փորձարկումները կարող են իրականացվել Մատակարարի կամ նրա ենթակապալառուի տարածքում, առաքման կետում և/կամ Ապրանքների վերջնական նշանավայրում, կամ Գնորդի երկրի մի այլ վայրում, ինչպես նշված է **ՊՀՊ**-ում: Համաձայն ՊԸՊ 26.3 ենթակետի, եթե փորձարկումն անցկացվում է Մատակարարի կամ նրա ենթակապալառուի տարածքում, ապա դրա համար անհրաժեշտ համապատասխան բոլոր միջոցները և օգնությունը, ներառյալ գծագրերի ու արտադրական տվյալների հասանելիությունը, պետք է տրամադրվեն տեսուչներին՝ առանց Գնորդի կողմից որևէ ծախս կատարելու:

26.3 Գնորդը կամ նրա կողմից նշանակված ներկայացուցիչը իրավունք ունեն մասնակցելու ՊԸՊ 26.2 ենթակետում նշված փորձարկումներին և/կամ ստուգումներին՝ պայմանով, որ Գնորդը իր վրա է վերցնում այդպիսի մասնակցության բոլոր ծախսերը, ներառելով՝ սակայն չսահմանափակվելով, ճանապարհային, սննդի և հյուրանոցային բոլոր ծախսերը:

26.4 Երբ Մատակարարը պատրաստ է իրականացնել այդպիսի ստուգում և փորձարկում, նա պետք է նախապես ողջամիտ ժամկետներում ծանուցի Գնորդին՝ նշելով իրականացման վայրն ու ժամանակը: Մատակարարը ցանկացած համապատասխան երրորդ կողմից կամ արտադրողից պետք է ստանա անհրաժեշտ թույլտվություն կամ համաձայնություն, որպեսզի ապահովի գնորդի կամ նրա կողմից նշանակված ներկայացուցչի մասնակցությունը այդ փորձարկմանը և/կամ ստուգմանը:

26.5 Գնորդը կարող է Մատակարարից պահանջել իրականացնելու Պայմանագրով չնախատեսված, բայց անհրաժեշտ համարվող փորձարկում և/կամ ստուգում՝ հաստատելու, որ Ապրանքների բնութագրերը և ֆունկցիոնալությունը համապատասխանում են Պայմանագրում նշված տեխնիկական հատկորոշիչների կանոններին և չափանիշներին՝ պայմանով, որ այդպիսի փորձարկում և/կամ ստուգում իրականացնելու հետ կապված Մատակարարի ողջամիտ ծախսերը կավելացվեն Պայմանագրի գնի մեջ: Ավելին, եթե այդպիսի փորձարկումը և/կամ ստուգումը խոչընդոտում է արտադրության ընթացքին և/կամ Մատակարարի պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը, ապա պետք է կատարվեն համապատասխան փոփոխություններ Առաքման և Ավարտի ժամկետների, ինչպես նաև այլ չկատարված պարտավորությունների հետ կապված:

26.6 Մատակարարը պետք է Գնորդին տրամադրի ցանկացած այդպիսի փորձարկման և/կամ ստուգման արդյունքների հաշվետվությունը:

26.7 Գնորդը կարող է մերժել ցանկացած Ապրանք կամ դրա որևէ բաղադրիչ, որը կձախողի որևէ փորձարկում և/կամ ստուգում, կամ չի համապատասխանի տեխնիկական հատկորոշիչներին: Մատակարար պետք է Գնորդի համար անվճար վերացնի թերությունները կամ փոխարինի այդպիսի մերժված Ապրանքները կամ դրանց մասերը, կամ կատարի անհրաժեշտ փոփոխություններ՝ տեխնիկական հատկորոշիչներին համապատասխանեցնելու համար, և Գնորդի համար անվճար նորից կրկնի փորձարկումը և/կամ ստուգումը՝ դրա մասին ծանուցելով ՊԸՊ 26.4 ենթակետի համաձայն:

26.8 Մատակարարն ընդունում է, որ ոչ Ապրանքների կամ դրանց որևէ մասի փորձարկման և/կամ ստուգման իրականացումը, ոչ Գնորդի կամ նրա ներկայացուցչի մասնակցությունը և ոչ էլ ՊԸՊ 26.6-րդ ենթակետի համաձայն որևէ հաշվետվության պատրաստումը չեն կարող ազատել Մատակարարին Պայմանագրով ստանձնած որևէ երաշխիքից կամ այլ պարտավորությունից:

27. Վնասի փոխհատուցում

27.1 Բացառությամբ ՊԸՊ 32 կետով նախատեսվածի՝ եթե Մատակարարը սույն Պայմանագրում սահմանված վերջնաժամկետներում չի կարողանում առաքել Ապրանքներից որևէ մեկը կամ բոլորը, կամ մատուցել Հարակից ծառայություններ, ապա Գնորդը՝ առանց վնասելու Պայմանագրով նախատեսված իր բոլոր այլ միջոցներին, Պայմանագրային գնից կարող է նվազեցնել վնասի փոխհատուցումը, որի գումարը համարժեք կլինի յուրաքանչյուր շաբաթվա հետաձգված Ապրանքների կամ չկատարված Ծառայությունների, կամ դրանց մի մասի վերջնական գնի **ՊՀՊ**-ում սահմանված տոկոսին՝ մինչ դրանց փաստացի առաքումը կամ կատարումը: Այդ նվազեցումները կարող են հասնել մինչև **ՊՀՊ**-ում նշված առավելագույն տոկոսի սահմանին, որից հետո Գնորդը կարող է դադարեցնել Պայմանագիրը՝ համաձայն ՊԸՊ 35-րդ կետի:

28. Երաշխիք

28.1 Մատակարարը երաշխավորում է, որ մատակարարվող Ապրանքները նոր են, չօգտագործված, ամենավերջին կամ ընթացիկ մոդելների են և ներառում են նախագծման և նյութերի բոլոր վերջին կատարելագործումները, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

28.2 Համաձայն ՊԸՊ 22.1 (բ) ենթակետի՝ Մատակարարը նաև երաշխավորում է, որ մատակարարվող Ապրանքները չեն ունենա որևէ թերություն, որը կառաջանա Մատակարարի կողմից թույլ տրված որևէ բացթողնման կամ նախագծի,

նյութերի և մշակման հետևանքով, որը կարող է ի հայտ գալ վերջնական նշանավայրում գերակշռող պայմաններում ճիշտ օգտագործման ժամանակ:

28.3 Եթե **ՊՀՊ**-ով այլ բան նախատեսված չէ, երաշխիքը ուժի մեջ է մնում 12 (տասներկու) ամսվա ընթացքում՝ Ապրանքը կամ դրա մի մասը, կախված հանգամանքներից, **ՊՀՊ**-ում սահմանված վերջնական նշանավայր առաքելուց և ընդունվելուց հետո:

28.4 Ցանկացած թերության բացահայտումից անմիջապես հետո Գնորդը՝ բոլոր առկա ապացույցների հետ միասին ծանուցում է Մատակարարին՝ նշելով այդպիսի թերության բնույթը: Գնորդը Մատակարարի համար պետք է ստեղծի բոլոր հնարավորությունները ուսումնասիրելու այդ թերությունները:

28.5 Նման ծանուցում ստանալուց հետո Մատակարարը պետք է, **ՊՀՊ**-ում սահմանված ժամկետում, արագորեն, Գնորդի համար անվճար, վերանորոգի կամ փոխարինի վնասված Ապրանքները կամ դրանց մասերը:

28.6 Եթե Մատակարարը ծանուցումն ստանալուց հետո **ՊՀՊ**-ում սահմանված ժամկետում չի կարողանում վերացնել թերությունները, ապա Գնորդը կարող է խելամիտ ժամկետներում Մատակարարի դիսկոլ և միջոցներով ձեռնարկել անհրաժեշտ վերականգնիչ գործողություններ՝ առանց խախտելու սույն Պայմանագրի շրջանակներում Մատակարարի նկատմամբ Գնորդի ունեցած որևէ այլ իրավունք:

29. Արտոնագրային փոխհատուցում

29.1 Համաձայն ՊԸՊ 29.2 ենթակետի՝ Մատակարարը պետք է փոխհատուցի և զերծ պահի Գնորդին և նրա աշխատակիցներին բոլոր տեսակի դատավարություններից և վարչական վարույթներից, բողոքներից, պահանջներից, կորուստներից, վնասներից, վճարներից և բոլոր տեսակի ծախսերից, ինչպիսիք են փաստաբանի վճարներն ու ծախսերը, որոնք Գնորդի համար կարող են ծագել որևէ արտոնագրի, գրանցված նմուշի, առևտրային ապրանքանիշի, հեղինակային իրավունքի կամ այլ մտավոր սեփականության իրավունքի խախտման դեպքում, եթե դրանք գրանցված են եղել պայմանագրի ստորագրման պահին հետևյալ նպատակով.

ա) Մատակարարի կողմից ապրանքների տեղադրում կամ օգտագործում այն երկրում, որտեղ տեղակայված է Գնորդի

վերջնական նշանավայրը, և

բ) Ապրանքի միջոցով արտադրված արտադրանքի վաճառք որևէ երկրում:

Նման փոխհատուցումը չի ներառում՝ Ապրանքների կամ դրանց մասերի օգտագործումը այնպիսի նպատակով, որը նշված չէ կամ ողջամտորեն չի բխում Պայմանագրից, Ապրանքների կամ դրանց որևէ մասի օգտագործման ժամանակ առաջացած խախտումների դեպքում, կամ ցանկացած այլ արտադրանքի արտադրման պարագայում, որն արտադրվում է Մատակարարի կողմից չմատակարարված որևէ այլ սարքի, սարքավորման կամ նյութերի միջոցով կամ համադրմամբ՝ համաձայն Պայմանագրի:

29.2 Եթե Գնորդի դեմ՝ ՊԸՊ 29.1 ենթակետի շրջանակներում, ներկայացվում է որևէ հայց կամ բողոք, ապա Գնորդը դրա մասին անմիջապես պետք է տեղեկացնի Մատակարարին, իսկ վերջինս իր միջոցներով և Գնորդի անունից պետք է զբաղվի այդ հայցերով կամ բողոքով, ինչպես նաև վարի ցանկացած բանակցություն՝ դրանք կարգավորելու նպատակով:

29.3 Եթե Մատակարարը այդպիսի ծանուցումն ստանալուց հետո քսանութ (28) օրվա ընթացքում Գնորդին չի տեղեկացնում այդպիսի հայցերով կամ բողոքներով զբաղվելու իր մտադրության մասին, ապա Գնորդը կարող է իր հայեցողությամբ և անունից կատարել այդպիսի գործողություններ:

29.4 Գնորդը, Մատակարարի խնդրանքով, պետք է հնարավորինս աջակցություն ցուցաբերի Մատակարարին այդպիսի հայցերի կամ բողոքների ժամանակ, և ողջամիտ սահմաններում փոխհատուցվի այդ գործընթացի հետևանքով առաջացած ծախսերի համար:

29.5 Գնորդը պետք է փոխհատուցի և զերծ պահի Մատակարարին և նրա աշխատակիցներին ու ենթակապալառուներին բոլոր տեսակի դատավարություններից և վարչական վարույթներից, բողոքներից, պահանջներից, կորուստներից, վնասներից, վճարներից և բոլոր տեսակի ծախսերից, ինչպիսիք են փաստաբանի վճարներն ու ծախսերը, որոնք Մատակարարի համար կարող են ծագել որևէ արտոնագրի, գրանցված նմուշի, առևտրային ապրանքանիշի, հեղինակային

իրավունքի կամ այլ մտավոր սեփականության իրավունքի խախտման դեպքում, եթե դրանք գրանցված են եղել պայմանագրի ստորագրման պահին և առաջացել են կամ առնչվում են Գնորդի կամ նրա անունից հանդես եկողի կողմից տրամադրված կամ նախագծված ցանկացած նախագծի, տվյալների, գծագրերի, հատկորոշիչների և այլ փաստաթղթերի կամ նյութերի հետ:

30. Պատասխանատվության սահմանափակում

30.1 Բացի հանցավոր անփութության կամ դիտավորյալ անօրինական գործողությունների դեպքերից՝

ա) Մատակարարը Գնորդի հանդեպ որևէ պատասխանատվություն չի կրում Պայմանագրի, իրավախախտումների և այլնի շրջանակներում՝ կապված ցանկացած անուղղակի կամ հետևանքային կորուստների կամ վնասների, օգտագործման, արտադրության, եկամտի կամ տոկոսների կորստի հետ՝ պայմանով, որ այս բացառությունը չի տարածվում Գնորդին փոխհատուցում վճարելու Մատակարարի պարտավորությունների վրա, և

բ) Մատակարարի ամբողջ պատասխանատվությունը Գնորդի հանդեպ, որն առաջացել է Պայմանագրի, իրավախախտումների և այլնի շրջանակներում՝ չպետք է գերազանցի Պայմանագրի ընդհանուր գինը՝ պայմանով, որ այս սահմանափակումը չպետք է կիրառվի թերություններով և անսարքություններով սարքավորումների վերանորոգման կամ փոխարինման արժեքի վրա, ինչպես նաև արտոնագրային իրավախախտումներին վերաբերող գնորդի հանդեպ մատակարարի որևէ պարտավորությունների վրա:

32. Ֆորս մաժոր

32.1 Մատակարարը չպետք է ենթարկվի Կատարման երաշխիքի բռնագրավման, վնասի փոխհատուցման կամ թերությունների պատճառով դադարեցման՝ այն չափով, որքանով Պայմանագրի շրջանակներում պայմանների կատարման ուշացումը կամ այլ պարտականությունների չկատարումը հանդիսանում է Ֆորս մաժորային հանգամանքների հետևանք:

32.2 Սույն կետի իմաստով՝ «Ֆորս Մաժոր» նշանակում է Մատակարարի վերահսկողությունից դուրս գտնվող որևէ իրադարձություն կամ իրավիճակ, որը կանխատեսելի չէ, անխուսափելի է և տեղի չի ունեցել Մատակարարի անփութության կամ անզգուշության պատճառով: Այդպիսիք կարող են համարվել, բայց չսահմանափակվել, հետևյալ

իրավիճակները. Գնորդի կամայական գործողություններ, պատերազմներ կամ հեղափոխություններ, հրդեհներ, ջրհեղեղներ, համաճարակներ, կարանտինային սահմանափակումներ և բեռնափոխադրման արգելքներ:

32.3 Ֆորս Մաժորային իրավիճակի առաջացման դեպքում Մատակարարը Գնորդին անմիջապես պետք է գրավոր ծանուցի իրավիճակի և դրա առաջացման պատճառների մասին: Եթե Գնորդի կողմից գրավոր այլ հրահանգ չի ստացվել, Մատակարարը պետք է շարունակի կատարել պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները այնքանով, որքանով դա ողջամտորեն հնարավոր է և ձգտի փնտրել պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆորս մաժորային իրավիճակով չկանխարգելվող բոլոր ողջամիտ այլընտրանքային միջոցները:

**33. Փոփոխման
կարգեր և
պայմանագրի
փոփոխություններ**

33.1 Գնորդը՝ ՊԸՊ 8-րդ կետի համաձայն, ցանկացած պահի ծանուցման միջոցով կարող է Մատակարարին պատվիրել փոփոխություններ կատարելու Պայմանագրի ընդհանուր դրույթներում հետևյալի վերաբերյալ.

(ա) Պայմանագրի շրջանակներում այն Ապրանքների գծագրերը, նախագծերը կամ հատկորոշիչները, որոնք արտադրվում են հատուկ Գնորդի համար,

(բ) բեռնման և փաթեթավորման մեթոդը,

(գ) առաքման վայրը, և

(դ) Մատակարարի կողմից մատուցվող Հարակից Ծառայությունները:

33.2 Եթե նման որևէ փոփոխություն առաջացնում է Պայմանագրով նախատեսված որևէ դրույթի կատարման Մատակարարի ծախսերի կամ դրա համար պահանջվող ժամանակի ավելացում կամ նվազում, ապա համապատասխան ճշգրտում պետք է կատարվի Պայմանագրային Գնում կամ առաքման/ավարտման ժամանակացույցում, կամ երկուսում էլ, և Պայմանագիրը պետք է համապատասխան փոփոխության ենթարկվի: Սույն կետի շրջանակներում Մատակարարի ցանկացած ճշգրտման պահանջ պետք է հաստատվի Գնորդի փոփոխման կարգը Մատակարարի կողմից ստանալուց հետո քսանութ (28) օրվա ընթացքում:

33.3 Մատակարարի կողմից ցանկացած Հարակից ծառայությունների համար գանձվող գները, որոնք անհրաժեշտ են, բայց ներառված չեն Պայմանագրի մեջ, պետք է նախապես համաձայնեցվեն կողմերի միջև և չպետք է գերազանցեն Մատակարարի կողմից

նմանատիպ ծառայությունների համար այլ կողմերից գանձվող տարածված դրույքաչափերը:

33.4 Ելնելով վերոնշյալից՝ Պայմանագրի պայմաններում ոչ մի շեղում կամ փոփոխություն չպետք է կատարվի, բացի կողմերի ստորագրություններով հաստատված գրավոր փոփոխություններից:

34. Ժամկետի երկարացում

34.1 Եթե Պայմանագրի կատարման ժամանակ Մատակարարը կամ նրա ենթակապալառուները կբախվեն Ապրանքների ժամանակին առաքմանը կամ Հարակից ծառայությունների մատուցմանը խոչընդոտող պայմանների՝ համաձայն ՊԸՊ 13 կետի, ապա Մատակարարը անհապաղ պետք է գրավոր ծանուցի Գնորդին ուշացման փաստի, դրա հավանական ժամկետների և պատճառների մասին: Մատակարարի ծանուցումը ստանալուց հետո, Գնորդը հնարավորինս արագ պետք է գնահատի իրավիճակը և իր հայացողությամբ կարող է երկարաձգել Մատակարարի կատարման ժամկետը, որի դեպքում երկարացումը պետք է վավերացվի կողմերի կողմից՝ Պայմանագրի փոփոխման միջոցով:

34.2 Բացի ՊԸՊ 32-րդ կետով սահմանված Ֆորս մաժորային իրավիճակներից՝ Մատակարարի կողմից Առաքման և ավարտման պարտավորությունների կատարման ուշացումը, ՊԸՊ կետ 26-ի համաձայն, առաջ է բերում վնասի փոխհատուցման պարտավորվածություն Մատակարարի կողմից, եթե ՊԸՊ 34.1 ենթակետի համաձայն ձեռք չի բերվել ժամկետի երկարացման մասին համաձայնություն:

35. Դադարեցում

35.1 Պայմանագրի դադարեցում՝ պարտավորությունների չկատարման պատճառով.

(ա) Անկախ Պայմանագիրը խախտելու դեպքում նախատեսված այլ փոխհատուցումներից, Գնորդը կարող է լուծել Պայմանագիրը ամբողջությամբ կամ մասնակի՝ պարտավորությունների չկատարման վերաբերյալ գրավոր ծանուցելով Մատակարարին,

(i) եթե Մատակարարը, Պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Գնորդի կողմից ՊԸՊ 34-րդ կետի համաձայն այդ ժամկետի երկարացման սահմաններում, չի կարողանում առաքել Ապրանքները կամ դրանց որևէ մասը,

(ii) եթե Մատակարարը չի կատարում Պայմանագրով սահմանված որևէ այլ պարտավորություն, կամ

(iii) եթե Մատակարարը, Գնորդի համոզմամբ, Պայմանագրի

համար մրցակցելիս կամ դրա կատարման ընթացքում ներգրավված է եղել կոռուպցիայի կամ խարդախության մեջ՝ համաձայն ՊԸՊ 3-րդ կետի:

(բ) Այն դեպքում, երբ Գնորդը, ՊԸՊ 35.1(ա) ենթակետի համաձայն, ամբողջությամբ կամ մասնակի լուծում է Պայմանագիրը, Գնորդը կարող է իրեն նպատակահարմար պայմաններով և եղանակով ձեռք բերել չառաքված Ապրանքներին կամ չմատուցված Հարակից ծառայություններին համարժեք Ապրանքներ կամ Ծառայություններ, ընդ որում Մատակարարը պարտավորվում է իր վրա վերցնել Գնորդի կողմից այդպիսի Ապրանքների կամ Հարակից ծառայությունների ձեռքբերման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսերը: Այդուհանդերձ, Մատակարարը պարտավոր է շարունակել չդադարեցված մասով Պայմանագրի կատարումը:

35.2 Պայմանագրի դադարեցում՝ անվճարունակության հետևանքով

(ա) Գնորդը ցանկացած պահի կարող է լուծել Պայմանագիրը՝ գրավոր կերպով ծանուցելով Մատակարարին, եթե վերջինս ճանաչվում է սնանկ կամ անվճարունակ: Այդ պարագայում պայմանագիրը կդադարեցվի առանց Մատակարարին փոխհատուցում վճարելու, և պայմանով, որ դադարեցումը որևէ կանխակալ վերաբերմունք կամ ազդեցություն չի ունենա Գնորդի գործելու կամ հատուցում ստանալու իրավունքի վրա:

35.3 Պայմանագրի դադարեցում՝ սեփական հայեցողությամբ

(ա) Գնորդը, իր հայեցողությամբ, ցանկացած պահի կարող է ամբողջությամբ կամ մասնակի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Մատակարարին: Դադարեցման մասին գրավոր ծանուցման մեջ պետք է նշված լինի, որ դադարեցումը կատարվում է Գնորդի հայեցողությամբ, պետք է նշվի, թե ինչ չափով է դադարեցվում Մատակարարի կողմից պայմանագրի կատարումը և դադարեցումն ուժի մեջ մտնելու ժամկետը:

(բ) Մատակարարի կողմից դադարեցման մասին գրավոր ծանուցումը ստանալուց 28 (քսանութ) օրվա ընթացքում պատրաստված և մատակարարման ենթակա Ապրանքները Գնորդի կողմից ընդունվում են Պայմանագրում սահմանված գներով և պայմաններով: Մնացած Ապրանքների համար Գնորդը կարող է ընտրել.

(i) Պայմանագրով սահմանված գներով ու պայմաններով ընդունել կատարված և մատակարարված ապրանքների ու

ծառայությունների մի մասը, և/կամ

- (ii) հրաժարվել մնացած մասից և Մատակարարին վճարել համաձայնեցված գումար մասամբ ավարտված Ապրանքների և Հարակից ծառայությունների, ինչպես նաև այն նյութերի ու պահեստամասերի համար, որոնք նախապես ձեռք են բերվել Մատակարարից:

**36. Իրավափոխան-
ցում**

36.1 Ոչ Գնորդը, և ոչ էլ Մատակարարը, սույն Պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները, մասամբ կամ ամբողջությամբ, չպետք է փոխանցեն մեկ այլ կողմի՝ առանց նախապես ստանալու գրավոր համաձայնություն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Խարդախություն և կաշառակերություն (Սույն Հավելվածի տեքստը չի կարող ձևափոխվել)

1. Նպատակը

Բանկի Կաշառակերության դեմ պայքարելու ուղեցույցները և սույն հավելվածը կիրառվում են Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման գործողությունների շրջանակում իրականացվող գնումների նկատմամբ:

2. Պահանջները

2.1 Բանկը պահանջում է, որ Փոխառուները, ներառյալ՝ Բանկի ֆինանսավորման շահառուները), մրցույթի մասնակիցները (հայտատուները, առաջարկ ներկայացնողները) խորհրդատուները, կապալառուները և մատակարարները, ենթակապալառուները, ենթախորհրդատուները, ծառայություններ մատուցողները կամ մատակարարները, նրանց գործակալները (անկախ նրանից, հայտարարված են, թե ոչ) կամ դրանց անձնակազմը պահպանեն էթիկայի բարձրագույն չափանիշներ, Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի գնումների գործընթացի, ընտրության և իրականացման ժամանակ և զերծ մնան Խարդախությունից և Կաշառակերությունից: Այս նպատակով Բանկը՝

ա. սույն դրույթի նպատակների համար հետևյալ կերպ է սահմանում ստորև բերված տերմինները.

- (i) «**կաշառակերություն**»՝ նշանակում է մյուս կողմի գործողությունների վրա անպատեհ կերպով ազդելու նպատակով ուղղակի կամ անուղղակի որևէ արժեք ներկայացնող բան առաջարկելը, տալը, ստանալը կամ միջնորդելը,
- (ii) «**խարդախություն**»՝ նշանակում է որևէ գործողություն կամ բացթողում, այդ թվում սխալ ներկայացում, որը գիտակցորեն կամ անշրջահայաց կերպով շփոթեցնում է, կամ որով փորձ է արվում շփոթեցնել կողմին՝ ֆինանսական կամ այլ օգուտ ստանալու կամ պարտականություններից խուսափելու նպատակով,
- (iii) «**գաղտնի պայմանավորվածություն**»՝ նշանակում է երկու կամ ավել կողմերի միջև մշակված պայմանավորվածություն՝ անպատեհ նպատակին հասնելու՝ այդ թվում մյուս կողմի գործողությունների վրա անպատեհ կերպով ազդելու համար,
- (iv) «**հարկադրանք**»՝ նշանակում է ուղղակիորեն կամ անուղղակի կերպով որևէ կողմին կամ կողմի գույքին վնաս պատճառելը կամ փչացնելը, կամ, վնաս պատճառելու կամ փչացնելու սպառնալիքը՝ կողմի գործողությունների վրա ոչ պատեհ կերպով ազդելու նպատակով,
- (i) «**խոչընդոտում**» նշանակում է՝
 - (ա) կանխամտածված կերպով հետաքննության համար ապացույց հանդիսացող նյութի ոչնչացում, կեղծում, խախտում կամ թաքցնում, կամ սխալ հայտարարությունների ներկայացնում հետաքննողներին՝ Բանկի կողմից կաշառակերության, խարդախության, գաղտնի պայմանավորվածության, հարկադրանքի դեպքերի հետաքննությանը էապես խոչընդոտելու նպատակով, և/կամ որևէ կողմին սպառնում, հարկադրում, կամ

վախեցնում՝ թույլ չտալու նրան բացահայտել հետազոտության հետ առնչվող նրա իմացած տեղեկությունները կամ հետ պահելու նրան հետաքննությունից,

(բ) գործողություններ, որոնք նպատակ ունեն նյութապես խոչընդոտել Բանկի կողմից նախատեսված գնման և աուդիտի իրավունքները, որոնք ներկայացված են ստորև բերված 2.2-ե կետում:

- բ. Կմերժի հաղթող ճանաչելու առաջարկը, եթե Բանկը որոշի, որ շնորհման համար առաջարկված ընկերությունը կամ անհատը, կամ նրա անձնակազմից որևէ մեկը, կամ նրա գործակալը, ենթախորհրդատուները, ենթակապալառուները, ծառայություններ մատուցողները, մատակարարները և/կամ նրանց աշխատողները, տվյալ պայմանագրի համար մրցելիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված է եղել կաշառակերության, խարդախության, գաղտնի պայմանավորվածության, հարկադրանքի կամ խոչընդոտման մեջ:
- գ. Ի լրումն համապատասխան Իրավական Համաձայնագրում սահմանված իրավական պաշտպանության միջոցների՝ կարող է նախաձեռնել այլ համապատասխան գործողություններ, այդ թվում գնումը հայտարարել ընթացակարգի խախտումով իրականացված, եթե Բանկը որոշի, որ փոխառուի ներկայացուցիչը կամ վարկի շահառուի ներկայացուցիչը պայմանագրի գնման, ընտրության կամ կատարման ժամանակ ներգրավված է եղել կաշառակերության, խարդախության, գաղտնի պայմանավորվածության, հարկադրանքի կամ խոչընդոտման մեջ, իսկ փոխառուն ժամանակին չի ձեռնարկել Բանկի համար գոհացուցիչ համապատասխան գործողություններ՝ նման դեպքերը տեղի ունենալու ժամանակ իրավիճակը շտկելու համար, այդ թվում ժամանակին Բանկին չի տեղեկացրել, որ գիտեր այդ դեպքերի մասին,
- դ. Բանկի հակակոռուպցիոն ուղեցույցների և Բանկի գերիշխող պատժամիջոցների քաղաքականությունների և ընթացակարգերի համաձայն՝ կարող է պատժամիջոցներ կիրառել ընկերության կամ անհատի նկատմամբ որոշակի կամ անորոշ ժամկետով, այդ թվում հրապարակայնորեն հայտարարելով այդ ընկերությանը ոչ իրավասու՝ (i) Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրեր շնորհվելու կամ այլ կերպ օգուտ ստանալու համար՝ ֆինանսապես կամ ցանկացած այլ ձևով՝ (ii) Բանկի ֆինանսավորմամբ ծրագրերի համար իրավասու հանդիսացող ընկերությունում որպես ենթախորհրդատու, մատակարարող կամ ծառայություններ տրամադրող նշանակվելու համար², (iii) Բանկի կողմից

¹ Կասկածներից խուսափելու համար՝ պատժամիջոցի տակ գտնվող այն կողմը, որն իրավասու չէ պայմանագրի շնորհման համար, չի կարող նաև, առանց սահմանափակման, (i) դիմել նախաորակավորման համար, շահագրգռվածության հայտ ներկայացնել որևէ խորհրդատվության կամ մրցույթի գործընթացում՝ ուղղակի կերպով կամ որպես նշանակված ենթակապալառու, արտադրող, մատակարար կամ ծառայություններ մատուցող նման պայմանագրի առնչությամբ և (ii) ընդգրկվել որևէ լրացման կամ փոփոխության մեջ, որը ներկայացնում է ցանկացած գոյություն ունեցող պայմանագրի էական փոփոխություն:

² Նշանակված ենթախորհրդատու, մատակարարող կամ ծառայություններ մատուցող են համարվում նրանք, որոնք (i) ընդգրկված են խորհրդատուի կողմից իր առաջարկում, քանի որ դա ապահովում է կոնկրետ և վճռորոշ փորձ ու տեխնոլոգիական գիտելիքներ, որոնք հաշվի են առնվում հատուկ ծառայությունների մասով խորհրդատուի առաջարկի տեխնիկական գնահատման ժամանակ, (ii) նշանակվել են Փոխառուի կողմից:

տրամադրված վարկային գումարներ ստանալու կամ այլ կերպով Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի պատրաստման կամ իրականացման գործընթացում հետագայում մասնակցելու համար»:

- Ե. Պահանջում է, որ մրցութային փաստաթղթերում/առաջարկ ներկայացնելու հրավերում և Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերում մի կետ ավելացվի, ըստ որի կպահանջվի, որ մրցույթի մասնակիցները (հայտատուները/առաջարկ ներկայացնողները), խորհրդատուները, կապալառուները, մատակարարները և նրանց ենթակապալառուները, Ենթախորհրդատուները, ծառայություններ մատուցողները, մատակարարները, գործակալների անձնակազմը թույլ տան Բանկին զննել³ առաջարկի ներկայացման և պայմանագրի կատարման (շնորհման դեպքում) հետ առնչվող բոլոր հաշիվները, հաշվետվությունները և այլ փաստաթղթերը, ինչպես նաև իրականացնել դրանց աուդիտ՝ Բանկի կողմից նշանակված աուդիտորների կողմից:

³ Այս համատեքստում զննումը սովորաբար հետաքննական (այսինքն դատական) բնույթ է կրում: Դա ներառում է Բանկի կամ Բանկի կողմից նշանակված անձանց կողմից նախաձեռնված փաստերի հավաքման գործողություններ՝ լուծելու հետազոտությունների/ աուդիտների հետ կապված կոնկրետ հարցեր, ինչպես օրինակ համապատասխան մեխանիզմների միջոցով հնարավոր Խարդախության կամ կաշառակերության մասին պնդման հավաստիությունը գնահատելը: Նման գործողությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում, ընկերության կամ անհատի ֆինանսական գրանցումները և տեղեկատվությունը ստանալը և ուսումնասիրելը, անհրաժեշտության դեպքում դրանց պատճենահանելը, ինչպես նաև հետազոտության/աուդիտի համար անհրաժեշտ ցանկացած այլ փաստաթուղթ, տվյալ և տեղեկատվություն ստանալը և ուսումնասիրելը (թղթային կամ էլեկտրոնային ձևաչափով), անհրաժեշտության դեպքում դրանց պատճենահանելը, անձնակազմի կամ այլ համապատասխան անհատների հետ հարցազրույց անցկացնելը, ֆիզիկական ստուգումներ կամ տեղամասային այցելություններ կատարելը և տեղեկատվության հավաստիացման ստանալը երրորդ կողմի կողմից:

Տեխնիկական հատկորոշիչներ

Չափաբաժին 8

Ուսումնական ողբոտներ 8

Տեխնիկական հատկորոշիչների ամփոփ աղյուսակ. Ապրանքները պետք է համապատասխանեն հետևյալ Տեխնիկական հատկորոշիչներին և չափորոշիչներին

h/h	Ապրանքների անվանումները	Արտադրողի լիազորագրի առկայություն Այո/Ոչ	Առաջարկվող տեխնիկական հատկորոշիչները և չափորոշիչները (մոդել, երկիր, տեխնիկական հատկորոշիչներ)
1	Մեխանիկական փոխանցումների լաբ.	Այո	Մոդել AMAU-08-001 Արտադրման երկիր Չինաստան, Հնդկաստան Մեխանիզմների ուսումնասիրման լաբորատոր սարքավորումներ, մեխատրոնիկայի դասավանդման սարքավորումներ, դիդակտիկ մոդելներ համալսարանների համար: Հավաքածուն պետք է ներառի 1. Ստատիկ դինամիկ հավասարակշռման սարք – 1 հատ, 2. Շարժիչային գիրոսկոպ – 1 հատ, 3. Լիսեռի պտտման ապարատ – 1 հատ, 4. Մեխանիկական տատանումների լաբ. (11 փորձեր) – 1 հատ, 5. Բռնցքների հետազոտման ապարատ – 1 հատ, 6. Էվոլվենտային ատամնանիվի ատամի պրոֆիլի ձևավորումը – 1 հատ, 7. Առամնանիվների ատամների ինտերֆերենցիա և ենթակտրում – 1 հատ, 8. Արագացման կորիոլիսային բաղադրիչը – 1 հատ, 9. Շփական անիվներով շարժաբերի մոդել – 1 հատ, 10. Շղթայավոր հաղորդակի մոդել – 1 հատ, 11. Մալթայան Մեխանիզմի մոդել – 1 հատ, 12. Արգելավոր մեխանիզմի մոդել – 1 հատ, 13. Շուտովիկի և շարժաթևի մոդել – 1 հատ,

			14. Շուտովիկ-շարժաթևային մեխանիզմ – 1 հատ, Ա – մխոցային շարժիչի մեխանիզմ – 1 հատ, Բ – տատանվող գլանի մեխանիզմ – 1 հատ, Գ – Վիտվորթի արագ վերադարձի մեխանիզմ – 1 հատ, 15. Քառօղակ մեխանիզմ – 1 հատ, 16. Կուլիսային մեխանիզմ – 1 հատ, 17. Էլիպտիկ տրասսերի մոդել – 1 հատ, 18. Ուատտի մեխանիզմ – 1 հատ, 19. Լծակային մեխանիզմի (Peculiar Linkage Drive) մոդել – 1 հատ, 20. Պանտոգրաֆի մեխանիզմ – 1 հատ, 21. Կինեմատիկ զույգեր – 1 հատ, 22. Սողնակի ծնկաձև լիսեռ – 1 հատ, 23. Շուտովիկաշարժաթևային մեխանիզմի մոդել – 1 հատ, 24. Երկու շուտովիկա-լծակային մեխանիզմի մոդել – 1 հատ, 25. Մեխանիզմի օղակների մոդել – 1 հատ, 26. Չորսձողանի մեխանիզմի ինվերսիայի մոդել – 1 հատ, 27. Տատանվող օղակի մեխանիզմի շուտովիկա-շարժաթևային շարժաբեր – 1 հատ, 28. Միասողնակ շուտովիկային մեխանիզմի ինվերսիան – 1 հատ, 29. Բռունցքային մեխանիզմի հավաքածու. Ա – Հարթ բռունցքով – 1 հատ, Բ – Շոշափող բռունցքով – 1 հատ, Գ – Գլանային բռունցքով – 1 հատ, Դ – Համընթաց շարժվող բռունցքով – 1 հատ, Ե – Ճոճվող բռունցքով – 1 հատ, 30. Բռունցքային մեխանիզմի աշխատող մոդել – 1 հատ
2	Փոկային փոխանցում	Այո	Մոդել AMAU-08-002 Արտադրման երկիր Չինաստան, Հնդկաստան Փոկային փոխանցման ընդգրկում է ուսումնական լաբորատոր սարքավորումներ, դիդակտիկ մոդելներ համալսարանների համար: Փոկային փոխանցման հավաքածուի մեջ մտնում են. 1. Փականիվների մոդել (Ա) – Հարթ փականիվ – 1 հատ, (Բ) – Ճոպային փականիվ – 1 հատ,

			(Գ) – Սեպափոկային փոկանիվ – 1 հատ, (Դ) – Կոնաձև կամ աստիճանման փոկանիվ – 1 հատ, 2. Մեկ արագությամբ փոկային շարժաբեր – 1 հատ, 3. Երկաստիճան փոկային շարժաբեր – 1 հատ, 4. Կորուստներով և արագընթաց փոկային շարժաբեր – 1 հատ, 5. Հինգ երիթակների հավաքածու – 1 հատ, 6. Շրջադարձային հողակապի մոդել – 1 հատ, 7. Շալինտային միացումների մոդել – 1 հատ, 8. Ճկուն միացումների մոդել – 1 հատ, 9. Ղեկային ձգանի հողակապի մոդել – 1 հատ, 10. Վռանի և երիթակի մոդել – 1 հատ, 11. Վարդակից միացան մոդել – 1 հատ, 12. Գամային միացումների մոդել – 1 հատ, 13. Գամային միացումներ (Ա) – եռակի գամային միացումներ – 1 հատ, (Բ) – քառակի գամային միացումներ – 1 հատ, (Դ) – անկյունային գամային միացումներ – 1 հատ, 14. Չորս տեսակի գամերի մոդել – 1 հատ, 15. Ագույցների մոդել – 1 հատ, 16. Ունիվերսալ ագույց – 1 հատ, 17. Կեռիկով ագույց – 1 հատ, 18. Երկեռով ագույցով փորձարարական ապարատ – 1 հատ, 19. Ճկուն ագույց – 1 հատ, 20. Արկղանման ագույց – 1 հատ, 21. Կցաշութային ագույց – 1 հատ, 22. Քանդվող ագույց – 1 հատ, 23. Օլդեմի ագույց – 1 հատ,
3	Ռեդուկտորային փոխանցումներ	Այո	Մոդել AMAU-08-003 Արտադրման երկիր Չինաստան, Հնդկաստան Ռեդուկտորային փոխանցումների հավաքածուն պետք է ընգրկի ուսումնական լաբորատոր սարքավորումներ, դիդակտիկ մոդելներ համալսարանների համար, որի մեջ մտնում են. 1. Միաստիճան գլանային ատամնանիվների մոդել – 1 հատ, 2. Միջանկյալ օղակով միաստիճան գլանային ատամնանիվների մոդել – 1 հատ, 3. Երկաստիճան գլանային ատամնանիվների մոդել – 1 հատ

			4. Եռաստիճան գլանային ատամնանիվների մոդել – 1 հատ, 5. Միաստիճան կոնական ատամնանիվների մոդել – 1 հատ, 6. Միաստիճան շեղատամ ատամնանիվների մոդել – 1 հատ, 7. Միաստիճան սպիրալային ատամնանիվների մոդել – 1 հատ, 8. Ատամնանվակների հավաքածու Ա – 4 հատանի հավաքածու – 1 հատ, 9. Շերոնային ատամնանիվների մոդել – 1 հատ, 10. Ներքին ատամներով ատամնապսակ և ատամնանվակ – 1 հատ, 11. Ատամնաքանոնային փոխանցման մոդել – 1 հատ, 12. Ուղղորդիչով լոգարիթմական սեպով մեխանիզմի մոդել – 1 հատ, 13. Ատամնաքանոնային մեխանիզմ – 1 հատ, 14. Մոլորակային կառույց – 1 հատ, 15. Արեգակնային ատամնանիվ և սատելիտներ – 1 հատ, 16. Ցիկլոիդալ փոխանցում – 1 հատ, 17. Որդնյակային փոխանցում – 1 հատ, 18. Ատամնանիվների հաջորդական միացում Բ – միացումներով – 1 հատ, 19. Միջառանցքային ատամնանիվներ – 1 հատ, 20. Փոխանցման տուփ (3 առաջ և 1 հետընթաց) Ա – առանց կցորդիչի – 1 հատ, Բ – կցորդիչով – 1 հատ, 21. Դիֆերենցիալ փոխանցում – 1 հատ, 22. Լիսեռի առանցքակալների հավաքածու Ա – բաց առանցքակալ – 1 հատ, Բ – հասարակ առանցքակալ – 1 հատ, Գ – շառավղային առանցքակալ – 1 հատ, Դ – հենարանային առանցքակալ – 1 հատ, Ե – շառավղահենարանային առանցքակալ – 1 հատ, Զ – հենարանաշառավղային առանցքակալ – 1 հատ, 23. Առանցքակալներ Ա – գնդիկավոր առանցքակալներ – 1 հատ, Բ – հղովակային առանցքակալներ – 1 հատ, Գ – կոնական առանցքակալներ – 1 հատ, Դ – ասեղնավոր առանցքակալներ – 1 հատ, 24. Առանցքակալների հավաքածու – 1 հատ, 25. Պտտվող առանցքակալներ – 1 հատ, 26. Կախովի կալունակ – 1 հատ,
--	--	--	---

			27. Պատի կալունակ – 1 հատ, 28. Կիսագնդային հատվածային պարուրակային գալարների մոդել – 1 հատ, 29. Կիսագնդային հատվածային մանեկի պարուրակային գալարների մոդել – 1 հատ, 30. Ստանդարտ հեղույս – 1 հատ, 31. Չորս տեսակի հեղույսներ – 1 հատ, 32. Ստանդարտ գիրոսկոպ – 1 հատ,
--	--	--	---

Ապրանքը նոր է, չօգտագործված: Երաշխիքային ժամկետը առնվազն 12 ամիս կարգաբերման և գործարկման օրվանից հետո: Մատակարարն ապահովում է սարքի տեղադրումը, կարգաբերումը և գործարկումը:



LIMITED LIABILITY COMPANY «BMS TECHNO»

Kharkivske Shose St., 175, office 17, Kyiv, Ukraine,
02121

https://www.bmstechno.ua/ office@bmstechno.com.ua
UA863052990000026000016205416
+38 (044) 585 59 75 ID: 22945907

Գնացուցակ
Չափաբաժին 8
Լարորատոր սարքավորումներ 5

Գնորդի երկիր									
Արժույթը ՀՄՄ 15 կետի համաձայն									
Ամսաթիվ 22.11.2024 ԱՄԳ Մրցույթ No: ՀԱԱՀ-ԱՄԳ-ԼԱԲ-24/2 Էջ N° 1 2 Էջից									
1	2	3	4	5	6	7	8	9	10
Հ/հ	Ապրանքների նկարագրությունը	Ծագման երկիրը	Քանակը	Չափման միավորը	Միավորի գինը տեղական արժույթով	Միավորի գինը /EXW գինը/ (Մյունակ 4X6)	Ապրանքները վերջնական նշանակալի հասցեներու համար Գնորդի երկրում փոխադրումների և այլ ծառայությունների արժեքը՝ յուրաքանչյուր ապրանքի համար	Յուրաքանչյուր ապրանքի համար վճարվելիք վաճառքի հարկերը (ԱԱՀ)՝ պայմանագրի շնորհման դեպքում (<ՄՄ 14.8(ii) եղծակետի համաձայն)	Յուրաքանչյուր ապրանքի ընդհանուր գինը (Մյունակ 7+8+9)
[նշել հեղթ անյան համա րը]	[նշել Ապրանքի անվանումը]	[նշել Ապրանք- ների ծագման երկիրը]	նշել մատու- կարություն քանակը	չափի միավորի անվանում ր	[նշել EXW միավորի գինը]	[նշել յուրաքանչյուր ապրանքի ընդհանուր EXW գինը]	[նշել համապատասխան գինը յուրաքանչյուր ապրանքի համար]	[նշել յուրաքանչյուր ապրանքի համար վճարվելիք վաճառքի և այլ հարկերը՝ պայմանագրի շնորհման դեպքում]	[նշել յուրաքանչյուր ապրանքի ընդհանուր գինը]
1.	Մեխանիկական փոխանցումների լաբ.	Չինաստ ան	1	հատ	7513077	7513077	-	-	7513077
2.	Փոկային փոխանցում	Չինաստ ան	1	հատ	1878267.3	1878267.3	-	-	1878267.3



LIMITED LIABILITY COMPANY «BMS TECHNO»

Kharkivske Shose St., 175, office 17, Kyiv, Ukraine,
02121

<https://www.bmstechno.ua/> office@bmstechno.com.ua

UA863052990000026000016205416

+38 (044) 585 59 75 ID: 22945907

3.	Ռեդուկտային փոխանցումներ	Չինաստան	1	հատ	2613245.7	2613245.7	-	-	2613245.7
								Ընդհանուր գինը տեղական արժույթով	12,004,590